ՎԱՆԻ ԳՐԱՒՄԱՆ ԱՌԹԻՒ ԵՂԱԾ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

Նորին Վեհափառութիւնը ուղարկել է Կովկասի Տ. Փոխարքային հետեւեալ հեռագիրը մայիսի 10-ին՝ Մայր Տաճարում Վանի գրաւման առթիւ Կայսերական մաղթանք կատարելուց յետոյ։

Նորին Պայծառափայլութեան Կովկասի Զօրաբանակի Գլխաւոր Հրամանատար Գենեռալ Ադիւտանտ կոմս Իլլարիոն Իվանովիչ Վարանցով-Դաշկովին.

Այսօր Վանի գրաւման առթիւ Մայր Տաճարում ներկայութեամբ ամբողջ միաբանութեան և աղօթաւորների խուռն բազմութեան ս. պատարագ մատուցանելուց յետոյ կատարուեց հանդիսաւոր մաղթանք։ Յայտնում եմ Ձերդ Պայծառափայլութեան անկեղծ շնորհաւորանքներ ու աղօթում եմ Ամենաբարձրեալին շնորհել Ռուսաց փառապանծ զօրքին նոր յաղթութիւններ և Ձերդ Պայծառափայլութեան առողջութիւն և երկար օրեր։

ԳԷՈՐԳ Ե. Կաթուղիկոս ամենայն Հայոց։

Ի պատասխան այս հեռագրի Վեհափառ Հայրապետը ստացել է հետեւեալ հեռագիրը.

Էջմիածին, 12 մայիսի 1915 թ.

Յայտնում եմ Ձերդ Սրբութեան սրտագին շնորհակալութիւն աղօթքի, բարի ցանկութեանց և սիրալիր շնորհաւորանքի համար մեր փառապանծ զօրքի նոր յաջողութեան առթիւ։ № 12862

Գենեռալ-Ադիւտանտ կոմս Վարանցով-Դաշկով։

Նորին Վեհափառութեան հեռագիրը Կովկասեան 4-րդ բանակի հրամանատարին.

Իգդիր, 10 մայիսի 1915 թ.

Չորրորդ բանակի հրամանատար Ինֆանտերիայի Գեներալ Պեսար Իվանովիչ Օգանովսկուն.

Ամբողջ հոգւով շնորհաւորում եմ Ձերդ Բարձր Գերազանցութեան Վանի գրաւման համար, այդ նշանակալից դէպքի առթիւ այսօր ս. Էջմիածնի Մայր Աթոռի Տաճարում կատարուեց հանդիսաւոր մաղթանք, ամբողջ միաբանութեան և խաղն ժողովրդի ներկայութեամբ, ռուս փառապանծ զօրքի և հայկական կամաւորների յաջողութեան համար։ Օրհնում եմ Ձեզ և ռուս յաղթական զօրքին, ցանկանալով նոր փառաւոր յաղթանակ պատերազմի դաշտում։

ԳԷՈՐԳ Ե. Կաթուղիկոս ամենայն Հայոց։

Վեհափառ Հայրապետը ստացել է հետեւեալ պատասխանը.

Էջմիածին,

Նորին Սրբութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց.

Չորրորդ բանակի շտաբ, 12 մայիսի 1915 թ.

Ամբողջ հոգւով շնորհակալ եմ Ձերդ Սրբութիւնից ս. Էջմիածնի Մայր Աթոռ Տաճարում Ամենաբարձրեալին Ձեր վեր առաքած ջերմ աղօթքների համար, Վանի՝ քրիստոնէութեան պատմական թշնամուց, և հայ ժողովրդի՝ դարաւոր լծից՝ ազատուելու նշանակալից օրը, շնորհիւ Ինձ հաւատացած չորրորդ բանակի յաղթական զինուորների և հայկական կամաւորների։

Գեներալ Օգանովսկի։